

«ՏՈՂԱԴԱՐՁ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ՀՏԴ 372.8

Հոդվածում շարադրված է «Տողադարձ» թեմայի ուսուցման մի մեթոդ, որն իրականացվում է 4 հաջորդական քայլերով: Դրանք են՝ 1) կանոնների ուսուցում, 2) հատուկ բանաձևի դուրսբերում, 3) բառաշարքի տողադարձում, 4) տողադարձի սխալների բացահայտում: Նշված գործողություններից նորույթի մասով կարող է առանձնանալ հատկապես երկրորդը՝ տողադարձման հնարավորությունների հաշվառումը մեր կողմից մշակված բանաձևով՝ «**ձայնավորների ընդհանուր քանակ -1 (+Ք +1, նոր արմատ (ներ))**»: Մեթոդը նախատեսված է ինչպես բուհական, այնպես էլ դպրոցական դասընթացների համար:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ տողադարձում, վանկատման սկզբունք, բառակազմական սկզբունք, բանաձև, գաղտնավանկ, բաղաձայնահաջորդ յ, ձայնավորից ձայնավոր տարածք:

Տողադարձը բառի մի մասի՝ տողում չտեղավորվելու պատճառով հաջորդ տող տեղափոխելն է: Ի տարբերություն մի շարք լեզուների՝ հայերենում տողադարձումը կատարվում է ըստ կանոնների, որոնք խմբավորվում են 2 սկզբունքների շուրջ՝ վանկատման և բառակազմական:

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք ներկայացնել թեմայի ուսուցման մի մեխանիզմ, որի հիմքում ընկած է դասավանդման մեր իսկ փորձը: Այն ենթադրում է 4 հաջորդական քայլերի կիրառում՝

1. կանոնների ուսուցում,
2. հատուկ բանաձևի դուրսբերում,
3. բառաշարքի տողադարձում,
4. տողադարձի սխալների բացահայտում:

1. Կանոնների ուսուցման փուլում ներկայացվում են նորմատիվ և գիտական գրականության մեջ տեղ գտած կանոնները [2, էջ 84–85/ 1, էջ 85–87]՝ ենթարկված որոշակի խմբագրման: Դրանք մենք ներկայացնում ենք այսպես՝

1.1. Վանկատման սկզբունքով տողադարձ կատարելիս հաջորդ տող անցնելու հնարավորություն է ունենում յուրաքանչյուր առանձին վանկ: Նկատել ենք, որ բառը վանկատումով կարող է ունենալ տողադարձման **ձայնավորների քանակից հանած մեկ** հնարավորություն, որն էլ կազմում է **տողադարձման հնարավորությունների նվազագույն շեմը**: Վանկի սահմանները ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում տալ բառի արտասանական պատկերը՝ գրելով գաղտնավանկի ը-ն, և-ի դիմաց էվ կամ յէվ, բառասկզբի և ձայնավորահաջորդ ո, Ե տառերի դիմաց՝ վօ, յէ (օր.՝ [բընամըթերք], [կարէվոր], [վօղջամիտ], [արջավօրս]): Հատուկ ուշադրություն է դարձվում նաև գաղտնավանկերի ճիշտ տեղադրման խնդրին, մասնավորապես չորս բաղաձայնով սկսվող բառերի դեպքում՝ ը-ն զետեղելով երկրորդ բաղաձայնից առաջ և հետո (օր.՝ գը/ տըն/ վել, բը/ ոընկ/ վել) [2, էջ 27]:

ա) Նոր վանկն առանձնացվում է ձայնավորից ձայնավոր տարածքի միակ կամ վերջին բաղաձայնի տարանջատմամբ (օր.՝ [բը/ նա/ մը/ թերք], [կա/ րե/ վոր], [վօղ/ ջա/ միտ], [ար/ ջա/ վօրս]): Պետք է հիշել, որ բառի՝ նոր տող գնացող մասը որպես կանոն սկսվում է բաղաձայնով, բացառությամբ 2 դեպքի՝ ա) երբ երկու ձայնավոր գտնվում են կից և կազմում են առանձին վանկեր (օր.՝ լի- ություն, հրե- ական), ընդ որում՝ այս կանոնը չի վերաբերում այն կից ձայնավորներին, որոնք ունեն երկինչյունային արտասանություն և կազմում են մեկ վանկ (օր.՝ քի/ միա/ կան, է/ ներ/ գիա, ռա/ դիո/ կա/ յան), բ) երբ հաջորդ տող գնացող մասը ձայնավորասկիզբ արմատ է (օր.՝ լայն- էկրան, օրբստ- օրե):

բ) Տողադարձի հատվածում **և**-ը վերածվում է **եվ**-ի (օր.՝ տերե- վաթափ):

գ) Բաղաձայնահաջորդ **յ** կիսաձայնի դեպքում գործում են տողադարձման գուգահեռ հնարավորություններ՝ ա) **յ**-ն հաջորդ տող է անցնում նախորդ բաղաձայնի հետ (այս դեպքում շեշտվում է **յ**-ի կիսաձայն լինելը, օր.՝ ան- կյուն, հեգու- թյուն), բ) **յ**-ն հաջորդ տող է անցնում առանձին (այս դեպքում **յ**-ն դիտվում է լիարժեք բաղաձայն, օր.՝ անկ- յուն, հեգույթ- յուն):

դ) Գաղտնավանկի **ը**-ն գրվում է տողադարձի սահմանային վանկերում, այն էլ՝ որոշ սահմանափակումներով: Կան այսպիսի կանոններ՝

դ/1. Կրկնվող արմատների դեպքում **ը**-ն գրվում է միայն առաջին արմատում (օր.՝ մըտ- մտալ, ճըռ- ճռալ):

դ/2. Նոր տողում **ը**-ն չի գրվում, երբ կա առանձին արմատ (օր.՝ շարա- դրություն, բնա- մթերք):

դ/3. Ավարտվող տողում **ը**-ն չի գրվում, երբ կա առանձին արմատ, որում **ը**-ն ոչ թե հնչյունափոխության արդյունք

է (ինչպես՝ տըն- տեսություն), այլ արմատի հնչյուն (օր.՝ ձկն- կիթ, ակն- թարթ):

դ/4. Անհրաժեշտ է խուսափել ավելորդ **ը**-երի ներմուծումից (օր.՝ մարմ- նի, կազմ- վածք):

ե) Զբ, զգ, շտ, սպ, ստ կապակցություններով սկսվող հասարակ անունների դեպքում ճիշտ ենք համարում տողադարձումը երկրորդ վանկից, քանի որ, կարծում ենք, առաջին վանկով տողադարձելիս աղավաղվում է բառի պատկերը (օր.՝ ըս- պիտակ, ըզ- բոսնել, ըշ- տապել), որն էլ կարող է առաջացնել ուղղագրական խնդիրներ ոչ տողադարձային իրավիճակներում: Ինչ վերաբերում է հատուկ անուններին, ապա այս դեպքում երկրորդ վանկից տողադարձումը դառնում է այլընտրանք չճանաչող նորմատիվ պահանջ (օր.՝ Սպի- տակ):

1.2. Բառակազմական սկզբունքով տողադարձ կատարելիս հաջորդ տող անցնելու հնարավորություն է ստանում յուրաքանչյուր նոր արմատ (օր.՝ մըշտ- արթուն, զարկ- երակ): Բառակազմական սկզբունքը չի տարածվում ածանցների և վերջավորությունների վրա:

Տողադարձի կանոնների շարքում շեշտվում է նաև այն, որ գործնական գրությունների մեջ, ելնելով բարոյագիտական նորմերից, անձնանունները չեն տողադարձվում:

2. Հատուկ բանաձևի դուրսբերում: Հիմնվելով վերը շարադրված կանոնների վրա երկրորդ փուլում դուրսբերվում է տողադարձման հնարավորությունների այսպիսի բանաձև՝ «**ձայնավորների ընդհանուր քանակ -1 (+1 +1*, նոր արմատ (ներ))**»: Ընդ որում՝ փակագծերում նշված են լրացուցիչ հնարավորությունները, որոնք կարող են գործել միայն համապատասխան իրավիճակներում: Բոլոր այն դեպքերում, երբ բառակազմական սկզբունքը զուգադիպում է վանկատման

սկզբունքին, տողադարձման լրացուցիչ հնարավորությունը բացառվում է:

Օր.[՝] **բազմանկյուն**– «3–1+1^{անկյուն}+1^լ = 4»

բազ– մանկյուն, բազմանկ–յուն, բազմ–անկյուն, բազման– կյուն

3. Տողադարձում փուլում տրվում են տարբեր կանոնների համապատասխանող բառեր, որոնք տողադարձելուց առաջ կատարվում են այսպիսի քայլեր՝ ա) գրվում է բառի արտասանական պատկերը, օրինակ՝ [կարէվորություն], բ) ընդգծվում են ձայնավորները, օր.[՝] [կարէվորություն], գ) նոր վանկերն առանձնացվում են ուղղահայաց գծերով, օր.[՝] [կա/ րէ/ վո/ րութ/ յուն], դ) նշված բանաձևով հաշվվում են տողադարձման հնարավորությունները (5–1+1=5): Նախապատրաստումից հետո կատարվում է տողադարձ՝ բոլոր հնարավորությունների հաջորդական կիրառմամբ և բանավոր հիմնավորումներով:

4. Տողադարձի սխալների բացահայտման փուլում ամրապնդվում են նախորդ փուլերից ստացված գիտելիքները,

ճշտվում են ձևավորված հմտությունները: Դրա համար տրվում է տողադարձված բառաշարք՝ բառերի ճիշտ և սխալ տողադարձումներով: Ուսանողի կամ աշակերտի խնդիրն է լինում գտնել տողադարձի սխալները՝ շտկումները հիմնավորելով անցած կանոններով:

Ամփոփելով նշենք, որ տողադարձում ուսուցանելու այս մեթոդը նպաստում է տողադարձման հմտությունների ձևավորմանը և տողադարձման բոլոր հնարավորությունների գիտակցված կիրառությանը: Այն կիրառելի է հանրակրթական դպրոցի և բուհերի բոլոր ֆակուլտետների՝ հայոց լեզվի դասընթացներում: Կարծում ենք՝ մեր առաջարկած բանաձևի հիման վրա հնարավոր է մշակել տողադարձման համակարգչային ծրագիր՝ խուսափելու համար տարբեր պարբերականներում հանդիպող պատահական տողանցում–տողադարձումներից:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 15.01.2013

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գ. Խաչատրյան**, Տողադարձի շուրջ, Հայերենագիտական աշխատասիրություններ, Վանաձոր, «Արմինֆո», 2008, 370 էջ:
2. **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2004, 352 էջ:

МЕХАНИЗМ ПРЕПОДАВАНИЯ ТЕМЫ “ПЕРЕНОС”

МЕЛКОНЯН ЭГИНЕ

*Преподаватель кафедры армянского языка Ванадзорского государственного педагогического
института им. О.Туманяна,
кандидат филологических наук*

В данной статье изложен опыт преподавания темы “Перенос” на уроках современного армянского языка: Выделены четыре этапа: 1) изучение правил; 2) оформление особой формулы; 3) перенос данных слов; 4) обнаружение ошибок переноса.

Данная методика, по нашему убеждению, может быть эффективно применена не только в вузах, но и в средних учебных заведениях.

Дата представления статьи: 15.01.2013

METHODS OF TEACHING “HYPHENATION”

HEGHINE MELKONYAN

*Lecturer of the Chair of the Armenian Language, VSPI,
PhD in Philological Sciences*

In the given article we have tried to introduce our experience in teaching “hyphenation” which we have gained during the period of teaching the practical course of Modern Armenian. We offer to teach the topic according to the following four steps: 1. teaching the rules, 2. elaboration of a hyphenation formula, 3. the process of hyphenation, and 4. finding hyphenation mistakes.

This is a productive method which can be used not only at higher educational institutions but also at secondary schools.

Article submission date: 15.01.2013